



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«26» 03 2018թ.

No 06/3-1/14927-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍԶՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 15.02.2018թ.

թիվ Պ-12 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը՝ իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-4-րդ մասերին համապատասխան՝ ֆիզիկական անձն իրավունք ունի նույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում դիմելու Հիմնադրամ՝ նույն մասում նշված՝ մեկից ավելի հիմքով վճարված (իրենց եկամուտներից հարկային գործակալի կողմից պահված) դրոշմանիշային վճարը հետ ստանալու համար:

Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ դրոշմանիշային վճար չեն վճարում նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 2-րդ կետում նշված այն անձինք, որոնք նույն գործատուի մոտ աշխատում են միայն մեկ աշխատանքային պայմանագրով, և տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա աշխատավարձը՝ հարկերը և պարտադիր այլ վճարները (ներառյալ՝ դրոշմանիշային վճարը) նվազեցնելուց հետո

չի գերազանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը: Նույն մասում նշված անձանց փոխարեն դրոշմանիշային վճարները վճարվում են տվյալ անձանց աշխատավարձ վճարող գործատուի կողմից՝ նրա միջոցների հաշվին:

ՀՀ կառավարության 02.02.2017թ. N86-Ն որոշման N3 հավելվածով սահմանված է վճարված դրոշմանիշային վճարի գումարը ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող կամ զոհված (մահացած) զինծառայողի ծնողներին, ամուսնուն և (կամ) զավակներին, ինչպես նաև ավել վճարված դրոշմանիշային վճարի գումարը ֆիզիկական անձին վերադարձնելու համար դիմում ներկայացնելու, իրավասու պետական մարմինների և հարկային մարմնի կողմից անհրաժեշտ տեղեկանքներ տրամադրելու և դրոշմանիշային վճարի գումարը վերադարձնելու կարգը, որի 5-րդ կետին համապատասխան՝ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին տեղեկանքը հարկային մարմնից ստանալու համար անձինք ներկայացնում են նաև գործատուի (հարկային գործակալի) տրամադրած տեղեկանքը՝ դրոշմանիշային վճարներն աշխատողի եկամուտներից պահված լինելու վերաբերյալ (բացառությամբ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված՝ հարկային գործակալ չհամարվող անձանցից եկամուտներ ստացող, ինչպես նաև նույն մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված անձանց):

Հաշվի առնելով վերոնշյալը և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հարկային մարմնում բացակայում է դրոշմանիշային վճարներն աշխատողի եկամուտներից պահված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը՝ հայտնում ենք, որ հարկային մարմինը կարող է տրամադրել անձի կողմից նախորդ մեկ տարվա ընթացքում վճարված (անձի եկամուտներից հարկային գործակալի կողմից պահված) դրոշմանիշային վճարների չափի մասին տեղեկանքը, եթե առկա է գործատուի (հարկային գործակալի) տրամադրած տեղեկանքն այն մասին, որ դրոշմանիշային վճարները պահվել են աշխատողի եկամուտներից, այլ ոչ թե վճարվել են գործատուի միջոցների հաշվին: Միաժամանակ, գործող օրենսդրությամբ, առանց գործատուի (հարկային գործակալի) վերոնշյալ տեղեկանքի՝ դրոշմանիշային վճար վերադարձնելու հնարավորություն սահմանված չէ:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ